Հայկ Մխոյան

1876 Թ. ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Բանալի բառեր - «Մասիս», «Արևելյան մամուլ», «Ավետաբեր», Քրիստո Բոտև, Ապրիլյան ապստամբություն, Բուլղարիա, Օսմանյան կայսրություն, Մեծ տերություններ, Բուխարեստի հեղափոխական կոմիտե:

Բուլղարական ազգային-ազատագրական պայքարի կարևորագույն իրադարձություններից էր 1876 թ. ապրիլյան ապստամբությունը, որը լայն արձագանք գտավ ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այս իրադարձությունները լայնորեն քննարկվեցին ժամանակի համաշխարհային մամուլում: Արևմտահայ մամուլը ևս զերծ չմնաց խնդրի արծարծումից ու բազմաթիվ նյութեր հրապարակեց ապստամբության մասին՝ տալով իր գնահատականները խնդրի վերաբերյալ:

Ապստամբության գաղափարախոսական նախապատրաստության համար 1874 թ. դեկտեմբերի 8-ից Բոտևը լույս ընծայեց «Ձնամյա» թերթը, որը շուտով դարձավ հեղափոխական կազմակերպության տպագիր օրգանը, որ մշակում էր ազատագրական պայքարի գաղափարական կառույցը[1]: 1875 թ. մայիսի 19-ին Տիրնովոյի նահանգային կենտրոնում տեղի ունեցավ հեղափոխական կոմիտեի գաղտնի նիստը, որտեղ հաստատվեց հեղափոխական կազամակերպության նոր կանոնադրությունը և ընդունվեցին որոշումներ ակտիվացնելու Բուլղարիայում հեղափոխական կոմիտեների ներքին գործունեությունը[2]: Արդեն օգոստոսին Բուխարեստում գումարվեց համագումար կոմիտեի այն անդամների մասնակցությամբ, որոնք այդ ժամանակ գտնվում էին Ռումինիայում: Բուլղարիայից մասնակցում էր միայն Ն. Օբրետենովը: Համագումարում միանձայն որոշում կայացվեց հեղափոխություն սկսել Բուլղարիայում: Ձեռնարկվեցին ապստամբության նախապատրաստական աշխատանքներ. գումարների հավաքում, զենքի հայթայթում, բալկանյան մյուս ժողովուրդներից օգնության հայցում: Բուլղարիա ուղարկվեցին Ստամբոլովը, Օբրետենովը, Վոլովը և այլք, որոնք պետք է կազմակերպեին հեղափոխությունը: Կոմիտեն կոչերով պահանջեց, որ չսպասեն զենքի և միջոցների հավաքմանը: Նախատեսվում էր, որ մի քանի չետեր կգնան Դանուբյան շրջաններ և իրենց գնալով ապստամբությանը թափ կհաղորդեն: Պ. Խիտովը նշանակվեց երկրի ներսում գլխավոր հրամանատար, իսկ Ֆ. Տոտյուն ջոկատներ պետք է կազմավորեր և ուղարկեր Ռումինիայից:

Բոսնիա Հերցեգովինայի ապստամբության ավարտական փուլում՝ 1875 թ. սեպտեմբերի 16-ին, Բուլղարիայում սկսվեց Ստարոզագորեի ապստամբությունը: Թեև

[1] Տե՛ս Валев Л., Исследования по новой и новейшей истории Болгарии, М., 1986 , с. 181-182.

[2] Տե՛ս Улунян А. А., Апрельское восстание 1876 года в Болгарии и Россия (очерки), М., 1978, с. 31.

կազմակերպվածության մակարդակը բավական ցածր էր և արագորեն ճնշվեց, սակայն դա ազդանշան էր, որ Արևելյան ճգնաժամը ավելի լայն չափեր է ընդգրկում՝ տարածվելով Բուլղարիայում:

Անհաջող ապստամբությունից հետո բուլղար վտարանդիների համար կարևորագույն հենակետ դարձավ Ջուրջու (Գյուրգևո) քաղաքը: Այնտեղ հավաքվեցին 1875 թ. ապստամբությունների ներկայացուցիչները: Նրանց շարքում էին Պ. Վոլովը, Ն. Օբրետենովը, Ս. Ստամբոլովը, Ս. Զահիմովը և այլք: Այստեղ էլ ձևավորվեց նոր կոմիտե, որի ղեկը ստանձնեց Ս. Ստամբոլովը: Կոմիտեն որոշեց 1876 թ. նոր ապստամբություն կազմակերպել:

1875 թ. ապստամբական շարժումից հետո Օսմանյան կայսրության իշխող վերնախավը որոշակի փոփոխություններ մտցրեց հպատակների նկատմամբ իր վերաբերմունքի մեջ: Դրանք քայլեր էին, որ միտված էին մեծ տերություններին ցույց տալ կայսրության՝ վերափոխումների դիմելու մտադրությունը: 1875 թ. նոյեմբերի 30-ին Բարձր դուռը հրապարակեց ֆերման, որը հայտարարում էր փոփոխություններ կատարելու սուլթանի այդպիսի մտադրությունների մասին: Հեղափոխական իրադարձությունների նվազեցմանը չնպաստեցին սուլթանի այս և մյուս քայլերը:

1876 թ. ապրիլի 20-ին եկեղեցու կոչնակների ազդարարող ձայնը և Գեորգի Տիխանեկի առաջին կրակոցը հայտարարեցին բուլղարական ապստամբության մասին, որը պատմության մեջ մտավ որպես բուլղարական ժողովրդի ազգային-ազատագրական և հեղափոխական պայքար, որ ավելի հայտնի է Ապրիլյան ապստամբություն անունով:

1876 թ. ապրիլին և դրանից հետո իրադարձություններին արևմտահայկական մամուլը բավական լայնորեն արձագանքել է հատկապես «Մասիս», «Արևելյան մամուլ» և «Ավետաբեր» թերթերում: Այդ թերթերը անդրադառնում են ինչպես ապստամբության պատճառներին, այնպես էլ ապստամբական գործողություններին ու մեծ տերությունների դիրքորոշումներին: 1875 թ. սկսած Կ. Պոլսի բուլղարական և հայկական մամուլը հայտնվեց թուրքական հետադիմության հարվածների տակ: Կ. Պոլսում տպագրվող հայ և բուլղարական մամուլի նյութերը այս շրջանում աչքի էին ընկնում ազգային իրավունքների համարձակ պաշտպանությամբ[1]: Մայրաքաղաքի բուլղարական թերթերի մի մասը տպագրվում էր հայկական տպարաններում:

«Արևելյան մամուլը» դեռևս ապստամբությունից առաջ կանխազգալով մոտալուտ իրադարձությունները և մատնանշելով այդ օրերի Հերցեգովինայի ապստամբությունը՝ գրում էր, որ այն մեծ տարածում է ստանում ու «Պուլկարիա ևս կ՛սկսի խլրտիլ»[2]: Ընդ որում այդպիսի տրամադրությունները համընդհանուր էին: Ռուս հյուպատոս Ի. Ա. Իվանովը այդ ժամանակ գրում էր. «Որոշ բուլղար անհատականություններ հիացմունքով են նայում Հերցեգովինայի ապստամբությանը և, ըստ նրանց, եկել է այն ժամանակը, երբ Ռուսաստանը, վերջապես, կիրագործի իր բարոյական պարտքը ցեղակից ճնշված ժողովուրդների նկատմամբ: Այդ դեմքերը այժմ համոզված են, որ Ռուսաստանը ունի դիվանագիտական համապատասպան կարողություն

[1] Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Ե., 1989, էջ 144:
[2] «Արևելյան մամուլ», օսոստոս, 1876, էջ 274:

և քառակի անգամ ավելի զինուժ, որով, իհարկե, երբեք չի կորցնի իր ազդեցությունը սլավոնների վրա…»[1]:

Պատրաստվելով Բուլղարիայում հեղափոխության՝ Կենտրոնական հեղափոխական կոմիտեն երկիրը բաժանեց չորս շրջանների՝ նշանակելով յուրաքանչյուրում ղեկավար և օգնականներ[2]: 1876 թ. ապրիլի 14-ին, իշխանություններից գաղտնի, Օբորիշտում բացվեց Առաջին ազգային մեծ ժողովը Բուլղարիայում: Ներկաները երդում տվեցին ոչինչ չխնայել հայրենիքի ազատագրության համար: Ժողովի բացումից առաջ Բանկովսկին առաջարկեց նշել լիազորությունները, որը «առաքյալներին» հնարավորություն էր տալիս հայտարարել ապստամբության մասին և նշանակել հրամանատարներ[3]:

Արևմտահայ մամուլը, որն ուշադրությամբ էր հետևում այս իրադարձություններին որոշ եղեկություններ է սկսում հաղորդել ապստամբության նախապատրաստման մասին: Մասնավորապես «Ավետաբերը» հաղորդում էր Բուլղարիայում թուրքական իշխանությունների կողմից զենքի կուտակման մասին և հայտնում, որ Սոֆիայից եկած լուրերով Նիշ քաղաքում մեծ քանակությամբ ռազմամթերք է տարվել[4]: Այս տեղեկությունները ցույց են տալիս, որ իրադրությունը բուլղարների և թուրքերի միջև արդեն բավական լարված էր ապրիլի սկզբին և թուրքական իշխանությունները որոշակի քայլեր էին ձեռնարկում ապստամբությունները կանխելու համար:

«Մասիսը» տեղեկություններ է տալիս թուրքական իշխանությունների ձերբակալությունների մասին: «Տասն և չորս ապստամբք ալ բռնուելով Վիտին տարուեր բանտարկուեր են»[5]: Հարցաքննությունների արդյունքում, ինչպես տեղեկացնում է թերթը, բանտարկյալները խոստովանություններ չեն արել[6]: Ապստամբները Բուխարեստից կապեր են հաստատել բուլղարական դպրոցների ուսուցիչների հետ: Նախատեսվում էր, որ Վառնայի նահանգում հազար գյուղացի պիտի միանար ապստամբությանը, կառավարության պաշտոնատար անձանց պետք է սպանեին: Բուլղարները հանդես էին գալիս կոչերով «հրաման կամ մահ», իսկ դրոշակի վրա գրված էր «ազատութիւն կամ մահ»[7]: Թերթը գտնում էր, որ ապստամբությունը մոլեռնադորեն տրամադրված տեղի որոշ թուրք բնակիչների կողմից է հրահրվել. թուրքերը սպառնում էին, թե քրիստոնյաները պետք է ջարդվեն[8]: «Այսուամենայնիւ երկու կողմէն եղած կասկածանքն իւր արդիւնքը տուաւ: Պուլղարք իրենք զիրենք պաշտպանելու համար ամուր գիւղեր քաշուեցան, և այսպէս ապստամբութիւնն սկսաւ, բայց շուտով զսպուեցաւ»[9]: Ապստամբության ճնշման գործում մեծ ազդեցություն են ունեցել բաշիբոզուկներն ու չերքեզները, որոնք նույնիսկ «սրոյ ճարակ եղած Պուլղար ընտաեաց մանկունք իբրև

[1] Освободительные движения на Балканах, Балканские исследования, Вып. 3, М., 1978, с 283.
[2] Նույն տեղում, էջ 65-66:
[3] Նույն տեղում, էջ 70:
[4] «Ավետաբեր», 11 ապրիլ, թիվ 15, 1876 թ., էջ 119:
[5] «Մասիս», 1876 թ., թիվ 1837, 3 հունիս, էջ 1:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում:

գերի վաճառած են»[1]: Ըստ թերթի, բաշիբոզուկների ու չերքեզների թիվը այս տարածքներում հասնում էր 40 հազարի[2]:

«Ավետաբերի» տեղեկությունների համաձայն՝ նույնիսկ այն վայրերում, որտեղ ապստամբություն չէր բռնկվել, ևս զորք է տեղակայվել. «Էսկի Զագրայի, Եէնի Զագրայի և Գըզանլըգի Պուլկարաց մէջ խռովութիւն եղած չէ, բայց այն քաղաքներուն մէջ պահապան զօրք դրուած են»[3]:

Թերթը տեղեկություններ է տալիս հեղափոխական կազմակերպությունների անդամների ձերբակալման մասին. «Կ՛ըսուի նաև թէ Ադրիանուպոլսոյ և Թաթարպազարճըգի մէջ յեղափոխական յանձնաժողովոյ անդամներ բռնուած են»[4]:

«Ավետաբերը» թվական տվյալներ է բերում բուլղար ապստամբների և թուրքական ուժերի մասին. «Հաֆըզ փաշայի եւ Ապտի փաշայի հրամանատարութեան գտնուած կանոնաւոր և անկանոն զօրաց թիւը 18,000ի կը հասնի: Պուլկար ապստամբաց թիւը յայտնի չէ, բայց Ադրիանուպոլիսէն «Մօնիթէօր տիւ Գօմէրս» լրագրին գրուած նամակը մը կը ծանուցէ թէ քիչ շատ զինեալ ապստամբաց թիւը 20,000ի կը հասնի»[5]: Կ. Պոլսում անգլիական դեսպան Հ. Էլիոթը անգլիական ղեկավարությանը իր նամակում տեղեկացնում էր, որ ապստամբների թիվը 10-20 հազար էր[6]: Այս տվյալները նվազեցված էին, քանզի միայն Բուլղարիայի հարավային շրջաններում սպանվել էր 30 հազար մարդ[7]:

Ապստամբության կազմակերպման ժամանակ Բուլղարները քաշվում են լեռները, որ ազատվեն բռնություններից: «Մարտ ամսոյ վերջերն իսլամներ քանի մը երիտասարդք իրենց կրած բռնութեանց չդիմանալով լեռները քաշուեցան: Ասոնց թիւը քսան և չորս հոգի էր, որոց հետ քանի մը պուլղար գիւղացիք ալ միացան»[8]: Մայիսի 19-ին 300 բաշիբոզուկներ պաշարում են ապստամբներին ու ձերբակալում 35 հոգու, իսկ մնացածների գլուխները կտրում են ու քաղաքի կառավարչի ապարանքի մոտ են դնում[9]:

Բուլղար ապստամբների ու թուրքական իշխանությունների միջև տեղի ունեցան բախումներ: «Մայիսի 8ին խումբ մը կայսերական զօրք Օթլուգ քէօյիւ մերձակալ գիւղերէն Սթրալճա գիւղին մօտ սակաւաթիւ ապստամբաց վրայ յարձակեցան և հինգ հոգի գերի բռնեցին»: Սա փաստում է, որ բախումներին մասնակցում էին հենց կանոնավոր թուրքական զորքերը: Թուրքական իշխանությունների կողմից ռմբակոծվել են նաև եկեղեցիներ, որոնցից մեկի մասին «Ավետաբերը» գրում է. «Մայիսի 10ին Ըէշիտ փաշա հինգ խումբ զօրքով և շատ մը Մահմէտական գիւղացիներով պաշարեց Փէրուսթիչա անուն Պուլկար գիւղ մը որ Փիլիպպուպոլիսէն 4 ժամ հեռու է: Գիւղացիք եկեղեցին ապաստանած էին: Փաշան նախ յորդորեց ապստամբները կառավարութեան հնազանդելու, բայց ապստամբք չանսացին և հրացանի հարուածներով պա-

---

[1] «Մասիս», 1876 թ., թիվ 1849, 3 հուլիս, էջ 1:
[2] Նույն տեղում:
[3] «Ավետաբեր», 23 մայիս, թիվ 21, 1876 թ., էջ 160:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Seton-Watson R. W., Disraeli. Gladston and the Eastern Question, New York, 1962, p. 63.
[7] Улунян А., Героическая эпопея болгарского народа (к 110-летию восстания 1876 г.), «Вопросы истории», № 5, 1986, с. 80-87.
[8] «Մասիս», 1876 թ., թիվ 1879, 15(27) սեպտեմբեր, էջ 1:
[9] Նույն տեղում:

տասխանեցին: Փաշան եկեղեցւոյն վրայ թնդանօթ արձակել տուաւ»[1]: Գնդակոծությունների արդյունքում 30 մահմեդական և 250 ապստամբներ մահացան, իսկ 600 ապստամբներ անձնատուր եղան[2]: «Ապստամբներէն ոմանք ալ իրենց կիներն և զաւակներն սպաննեցին որպէս զի զօրաց ձեռքը չիյնան»[3]: Այսպիսի բախումներից մի քանիսի մասին թերթը ևս տեղեկություններ է տալիս. «Մայիս 11ին և 12ին կռիւ մը եղաւ Օթլուգ քէօյի մօտ»: Այստեղ կայսերական զորքի թիվը հասնում էր 5000-ի, որը ղեկավարում էր Ռեշիտ փաշան: Հրամանատարը նախ հինգ զինվոր ուղարկեց ապստամբների հետ բանակցելու և նրանց իրենց գյուղեր հետ կանչելու համար, սակայն նրանք թուրքական զորքի ներկայացուցիչներին սպանեցին: «Ասոր վրայ զօրքը ուժգին յարձակեցան ապստամբաց վրայ և կարճատև պատերազմ մը ընելով ապստամբներէն շատ մարդ սպաննելէ ետքը զանոնք փախուցին»[4]:

Բարձր դուռը արագ արձագանքում էր բախումներին ու փորձում վեճերը կարգավորել: Միաժամանակ «Մասիսը» կարծիք է հայտնում, որ ամերիկացի և ռուս տեղեկագիրները ապստամբության նշանակությունը փոքրացնում են ու գտնում, որ կազմակերպված ապստամբություն չկա[5]: Դրանով, թերթը սկսում է նոր քաղաքականություն վարել, որը միտված էր բուլղարների ապստամբությանը համակարգված բնույթ տալ, որը նախկինում երբեք չէր արվել: Դրանով հանդերձ «Մասիսը» պաշտպանում էր թուրքական իշխանություններին ու մեղադրում ամերիկացիներին ու ռուսներին ապստամբությանը լուրջ չվերաբերվելու համար, որի հետևանքով կարող էր մեծ արյունահեղություն տեղի ունենալ: Այնուամենայնիվ, թերթը զերծ է մնում թուրքական իշխանություններին մեղադրել ջարդերի մեջ: Այն դեպքում, երբ 1876 թ. Բեռլինում ստորագրվեց «Բեռլինյան հուշագիր» անունը կրող փաստաթուղթը, որով կոչ էին անում իշխանություններին դադարեցնել ռազմական գործողությունները և ապստամբների հետ երկու ամսով հաշտություն կքնել[6]:

Սակայն երբեմն հակասություններ են առաջանում թերթի պաշտոնական գաղափարների ու գրվածքների միջև: Դրանք ցույց էին տալիս, որ թուրքական իշխանությունները այնուամենայնիվ մասնակցում էին բուլղարների դեմ բռնություններին: «Ապստամբք միայն քանի մը սպառազէն թուրքեր սպանած են եղեր կռուով, բայց անգթութիւններ գործած չեն եղեր»[7]:

Թուրքական իշխանությունները տեղեկացնելով տեղի մահմեդականներին բուլղարական ապստամբության մասին՝ կոչ էին արել պաշտպանվել: «Հետևաբար ասոնք ամենայն կատաղութեամբ Պուլղարաց վրայ ինկան, և ահագին կոտորած տուին, մանաւանդ որ Իսլամք ալ լսած էին թէ Պուլղարք իրենց տունները պիտի այրեն և զիրենք պիտի ջարդեն, և այս պատճառաւ երկիւղն ու կասկածն իրենց զայրոյթն ու կրքերը բորբոքած էր»[8]:

---

[1] Նույն տեղում:
[1] «Ավետաբեր», 23 մայիս, թիվ 21, 1876 թ., էջ 160:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս «Մասիս», 1876 թ., թիվ 1879, 15(27) սեպտեմբեր, էջ 1:
[5] Տե՛ս Улунян А., նշվ. աշխ., էջ 91:
[6] Նույն տեղում:
[7] «Մասիս», 1876 թ., թիվ 1883, 23 սեպտեմբեր (5 հոկտեմբեր), էջ 1:
[8] Նույն տեղում:

Այնուամենայնիվ, թերթը մեղադրում է թուրքական իշխանություններին այն պատճառով, որ «կանոնաւոր զօրք չղրկելով պաշը-պօզուգներու զինուորումը թոյլ տալուն և անկէ յառաջ ալ յեղափոխական գործակատարներուն շրջագայութեան անհոգ գտնուելուն համար. թէ վերջապէս ապստամբութեան զսպումը խիստ անգութ կերպիւ եղած և մէկ յանցաւորի փոխարէն յիսուն անմեղ մեռած է»[1]:

Սա և՛ լրատվություն էր, և՛ բացահայտ քննադատություն Բ. Դռան հասցեին: Թերթը այստեղ կրկին փորձում էր թաքցնել թուրքական իշխանությունների մասնակցությունը ապստամբներին կոտորելու գործում, որոնք մայիսի 20-ին արդեն, ըստ էության, արյան մեջ խեղդել էին ապստամբությունը: Արևմտահայ թերթերի այսպիսի դիրքորոշումը բուլղարական դեպքերին պայմանավորված էր Օսմանյան կայսրության գաղափարական պարտադրանքներով, որոնց ազդեցության ներքո էին լույս տեսնում հայկական թերթերը:

Թուրքական իշխանությունները ապստամբության ընթացքում և նրա ճնշումից հետո սկսեցին հալածանքներ ու կոտորածներ բուլղարների նկատմամբ: Ադրիանուպոլսի ռուսական հյուպատոսության կառավարիչ Ալեքսեյ Ցերետելևը Բուլղարիայում տիրող իրավիճակի մասին իր պաշտոնական գրությունում վերլուծելով թուրքական իշխանությունների գործողությունները՝ հանգում էր այն եզրակացության, որ ապստամբության ճնշման քողի ներքո տեղի էր ունենում քրիստոնեական ազգաբնակչության ոչնչացում: Ըստ վերջինիս՝ օսմանյան կառավարությունը ձգտում էր «լիովին ազատվել բուլղարական ոգուց» և իր հիմնական հարվածը ուղղում էր հոգևորականների և ուսուցիչների դեմ[2]:

Ամփոփելով բուլղարական տարածքներում տեղի ունեցած ավերները՝ թերթը նշում է դրանց վերականգնման անհրաժեշտության մասին: «Վաթսուն աւերակ գիւղեր վերաշինել հարկ է, կըսէ, ու ոչ տուն մնացած էր, որ եկեղեցի, ոչ դպրոց: Ասկէց զատ ընդարձակ երկիրներ մշակութեան վերածել, կենդանիներ մատակարարել, և շինուելիք տուներուն կարասի պատրաստել հարկ է»[3]: Ավերված շրջանների և գյուղերի մասին արևմտահայ թերթերը, սակայն, հակասական տվյալներ են ներկայացնում. եթե «Մասիսը» խոսում է ողջ Բուլղարիայում 60 ավերակ գյուղերի մասին[4], ապա «Ավետաբերը» հայտնում է, որ միայն Ֆիլիպուպոսի շրջանում ավերվել է 118 գյուղ[5]: Այս մասին ամերիկացի հյուպատոս Պ. Շույլի զեկույցն է ներկայացրել «Արևելյան մամուլը»՝ նշելով, որ 65 գյուղեր են հրո ճարակ դարձել, իսկ այնուհետև շարունակում է. «տասնհինգ հազար պուլկար կանայք, մանկտիք, ծերք ՛ի սուր մատնուեր են եղեր անխնայ»[6]: Իրականում Ապրիլյան ապստամբության ընթացքում թուրքական իշխանությունների ձեռքով կոտորվել է 30 հազար մարդ, այրվել են 80 և ամբողջությամբ թալանվել 200 բնակավայրեր[7]:

---

[1] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն, 1876 թ. ցեղասպանության ծրագրի առաջացումը, «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտական զեկույցների ժողովածու, Ե., 2009, էջ 9-17:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս «Ավետաբեր», 30 մայիս, թիվ 22, 1876 թ., էջ 175:
[5] «Արևելյան մամուլ», սեպտեմբեր, 1876, էջ 325-326:
[6] Տե՛ս Улунян А., նշվ. աշխ., էջ 85:
[7] «Ավետաբեր», 20 հունիս, թիվ 25, 1876 թ., էջ 199:

Ապստամբության պատճառների և հետևանքների ուսումնասիրության համար ստեղծվել է հանձնաժողով, որի մասին«Ավետարբերը» գրում է. «Փիլիպուպոլսէն կը գրեն թէ, յանձնաժողով մը կաշխատի Պուլկարաց ապստամբութեան գրգռիչները գտնելու, և թէ այն տեղի քանի մը պատուաւոր Պուլկարները մեծ վտանգի մէջ են»[1]:

Ապստամբների նկատմամբ սկսվեցին հալածանքներ, որոնցից շատերը կախաղան բարձրացվեցին, իսկ մի մասն էլ ուղարկվեց փոքրասիական բանտեր՝ իրենց պատիժը կրելու[2]: Հանձնաժողի աշխատանքերի ժամանակ մեծ թվով բուլղար ուսուցիչների ևս ապստամբությանը մասնակցելու մեղադրանքներ են ներկայացվել[3]: Միաժամանակ հանձնաժողովը որոշում է ապստամբությանը մասնակցած բուլղարներին վերադարձնել բաշիբոզուկների և չերքեզների հափշտակած գույքը[4]:

Թուրքական իշխանությունները պարզում են այն դաժանությունները, որ կատարել են բաշիբոզուկները: Իհարկե, սա միակողմանի մոտեցում էր, ամեն ինչում այլ ուժերի մեղադրելու միտում էր արևմտահայ մամուլի կողմից: Ըստ «Մասիսի»՝ սա սրում էր իրավիճակը, քանզի դատապարտված բաշիբոզուկները հանդարտվելու փոխարեն վրեժխնդրությամբ էին լցվում ու կատարում ավելի մեծ ոճիրներ[5]: Փաստորեն, թերթը գտնում էր, որ միայն բաշիբոզուկների ձեռքի գործն էին բուլղարների դեմ կատարված ոճրագործությունները և թուրքական իշխանությունները անմեղ էին: Նրանք միայն զգույշ էին, որ էլ ավելի չսրվեն բախումները: Թերթը թեև մեղադրում էր բաշիբոզուկներին, սակայն մեղավոր էր համարում նաև բուլղար ապստամբներին, որ ապստամբել են ու առիթ տվել վրեժխնդրության[6]:

Ըստ արևմտահայ մամուլի՝ հետաքննությունների ընթացքում կայսերական կառավարությունը վարձատրում է այն մահմեդականներին, ովքեր «Պուլղարիոյ վերջին անցից ժամանակ գթութեան ու մարդասիրութեան փորձեր տուեր են Պուլղար գիւղացիները պաշտպանելով»[7]: Նույն վարձատրությունը տրվել է նաև այն բուլղարներին, որոնք ապստամբության ժամանակ իրենց դիմող ու ապաստան խնդրող մահմեդական բնակիչներին պաշտպանել են[8]:

Ցանկանալով ցույց տալ ապստամբների կատարած չարագործությունները և հիմնավորել թուրքական իշխանությունների հալածանքները՝ իշխանությունները սկսում են մեղադրել ապստամներին դաժանությունների մեջ: «Օսմանեան տեղեկագիրք կըսէին նաև թէ ապստամբք զանազան անգթութիւններ ալ գործած էին, որոց դէմ իսլամք ալ վրէժխնդրութեան դիմեցին»[9]: Սակայն բուլղարների դեմ ավելի մեծ անգթություններ կատարվեցին[10]: Սրանով «Մասիսը» անհամատեղելի է համարում թուրքերի ու բուլղարների գործողությունները և մեղադրանքի հիմնական ուղղությունը դարձնում է թուրքական իշխանություններին:

---

[1] Տե՛ս Улунян А., նշվ. աշխ., էջ 85:
[2] Տե՛ս «Ավետաբեր», 27 հունիս, թիվ 26, 1876 թ., էջ 207:
[3] Տե՛ս«Ավետաբեր», 4 հուլիս, թիվ 27, 1876 թ., էջ 216:
[4] Տե՛ս «Մասիս», 1876 թ., թիվ 1852, 10 հուլիս, էջ 1:
[5] «Մասիս», 1876 թ., թիվ 1852, 10 հուլիս, էջ 1:
[6] «Մասիս», 1876 թ., թիվ 1868, 18 օգոստոս, էջ 2:
[7] Նույն տեղում:
[8] «Մասիս», 1876 թ., թիվ 1879, 15(27) սեպտեմբեր, էջ 1:
[9] Նույն տեղում:
[10] «Ավետաբեր», 30 մայիս, թիվ 22, 1876 թ., էջ 176:

Անդրադառնալով օտար պետությունների միջամտություններին՝ արևմտահայ մամուլը ներկայացնում է այլ վայրերից բուլղարներին օգնության շտապող խմբերի մասին: «Ավետաբերի» հավաստմամբ Ավտրիայից շոգենավով մոտ 200 ճամփորդներ են եկել Վիդինի ապստամբությանը մասնակցելու համար[1]: Կառավարական զորքերը իմանալով այս մարդկանց մասին «զօրք ղրկեց անոնց ետեւէն, որ 48 ժամ չանցած անոնց վրայ հասնելով անոնցմէ 60 հոգի սպաննեցին և 30ի չափ ալ բռնեցին»[2]:

Ռուսական մասնակցության խնդրին է անդրադառնում «Մասիսը», որը գրում է, թե ռուսական իշխանությունները ցանկանում են Բուլղարիայում Վլադիմիր Մեծ իշխանին դարձնել թագավոր, այն բանից հետո, երբ «Սերվիացիք յաղթանակաւ Պուլղարստան մտնեն»[3]: «Արևելյան մամուլը» Ռուսաստանի քաղաքականությանը անդրադառնալիս ամեն կերպ նշում է, որ նա շարժվում է իր շահերին համապատասխան. «ոչ այնքան Պալգանի սլավներուն համար մարդասիրութան ոգին կ՛շարժէ իր քայլերը, որչափ իր պետութեան ապահովութիւնը, վասն զի միապետութան մը ամենէն ահարկու թշնամիներն ազատութիւն ու սահմանադրական հիմնարկութիւններ են»[4]: Առհասարակ, հարկ է նշել, որ Արևելյան հարցում տերությունների քաղաքականության նպատակները Մամուրյանը հաշվի է առնում բավականաչափ վերացականորեն[5]:

«Մասիսը» վկայակոչելով անգլիական «Թայմզ» ու «Դեյլի Նյուզ» լրագրերը՝ գրում է, որ Բուլղարիայում տեղի ունեցած խժդժությունները իրականացվել են բաշիբոզուկների կողմից: «Գլխաւորապէս կըսէին թէ հարիւրի չափ Պուլղարի գիւղ հրոյ ճարակ եղան, առնուազն քսանևհինգ հազարի չափ անզէն անձինք սպաննուեցան, հազարէն աւելի Պուլղար մանկունք իբրև գերի վաճառեցան. սարսափելի տանջանք տրուեցան ձերբակալեալ ապստամբաց, կանանց պատիւը բռնաբարեցաւ, տասն հազարի չափ Պուլղարք բանտարկեալ են և քաղաքները պատսպարեալ Պուլղարաց ամեն տեսակ թշնամանք կը լինի»[6]: Այս ամենի հետևանքով անգլիական իշխանությունները դիմում են Բարձր Դռանը, որպսզի վերջինս կատարի հետաքննություն նշված դեպքերի վերաբերյալ:

Անգլիայի խորհրդարանում ևս քննարկումներ են լինում բուլղարական հարցով ու ներկայացվում է նրանց ծանր վիճակը. «Բազմաթիւ Պուլղար աղջկունք և մանկունք իբրև գերի վաճառուած էին, և բանտարկեալ Պուլղարաց ալ տանջանք կը տրուէր: Նօվօ-Սէլօյի մօտ վանքի մը մէջ 40 աղջկունք բռնաբարուելէ ետև հրակիզուած էին»[7]: Անգլիական իշխանությունները բազմաթիվ դիմումներ են հղում ու ներկայացուցիչներ ուղարկում տարածաշրջան՝ խնդիրը կարգավորելու համար: Հետագա համարներում տեսնում ենք, որ անգլիական ղեկավարությունը ի դեմս Գլադստոնի պահանջել է Թուրքիայի բուլղարական գավառներին ինքնավարություն շնորհել[8]: Սակայն սրան դեմ է արտահայտվել Դիզրայելին, որը գտնում էր, որ «Անգղիա Սլավ գաւառաց մէջ

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արևելյան մամուլ», մարտ, 1877, էջ 120:
[4] «Արևելյան մամուլ» հանդեսի մատենագիտություն, Ե., 1976, էջ 7:
[5] «Մասիս», 1876 թ., թիվ 1852, 10 հուլիս, էջ 1:
[6] Տե՛ս «Մասիս», 1876 թ., թիվ 1854, 15 հուլիս, էջ 1:
[7] «Մասիս», 1876 թ., թիվ 1860, 29 հուլիս, էջ 1:
[8] Տե՛ս նույն տեղում:

խաղաղութեան վերահաստատուելուն պիտի աշխատի»[1]: Երկու ուժերի միջև հակասությունները գնալով այնքան են մեծանում, որ Գլադստոնը հրատարակում է «Արևելյան հարցը և բուլղարական սարսափները» վերնագրով գրքույկ, որն ընդարձակ արձագանք է գտնում է ժողովրդի շրջանում ու հրատարկվելով 250,000 օրինակ՝ արագ սպառվում է[2]: Այստեղ մեղադրվում է Դիզրայելիի կառավարությունը, որ ծածկել է Արևելյան դեպքերի ճշմարտությունը ժողովրդից[3]:

Այդ օրերին «Մասիսը» գրում է, որ անգլիական թերթերում տպված նյութերը ընթերցողներին սարսափ են պատճառում: Միաժամանակ ստահոդ է որակում օսմանյան բանակին վերագրված այն լուրերը, թե սերբ կանայք ու երեխաները գերի են տարվում: Անգլիացիները բազմաթիվ դեսպանություններ են ուղարկում տարածաշրջան՝ դեպքերն ուսումնասիրելու համար և հայտարարում են, որ կանանց ու երեխաների վաճառքի մասին լուրերը կեղծ են ու իրականությանը չեն համապատասխանում[4]: Անգլիացիները նույնիսկ գումար են հանգանակում բուլղարներին օգնելու համար. «Մայրաքաղաքիս մէջ Անգղիոյ դեսպանին նախագահութեան ներքև մասնաժողով մը կազմուեցաւ Պուլղար խղճալիներուն նպաստ հաւաքելու համար»[5]:

Անգլիայում բուլղարական իրադարձությունների կապակցությամբ տեղի են ունենում ցույցեր, որոնք դիմում էին թագուհուն կառավարությանը դիմելու և բուլղարներին օգնելու համար: «Կը խնդրեն նաև որ Թագուհին այնպիսի անգթութեանց շարունակութեան ու կրկնութեան դէմ ազդու միջոցներ ձեռք առնելու հրաման տայ իւր կառավարութան: Անգղիացիք միայն ունայն բառերով գոհ չեն ըլլար, այլև մեծագումար ողորմութիւն կը հաւաքեն Պուլղարիոյ խղճալեաց ղրկելու համար, որով կը ցուցանեն թէ ստուգիւ մեծ ազգ կոչելու արժանի են»[6]:

Բուլղարները իրենց ցասումը արտահայտելով ոճրագործությունների դեմ՝ անգլիական կառավարությունից պահանջում էին, որ մարդասպանները պատժվեն և «այսուհետև այսպիսի կոտորածներ չըլլալու համար ապահովութան միջոցներ ձեռք առնուին»[7]:

«Արևելյան մամուլը» գտնում է, որ Եվրոպայի ու մասնավորապես Անգլիայի հասարակական կարծիքը այս իրադարձությունների հետևանքով շրջվել է Թուրքիայի դեմ[8]: Բուլղարական ապստամբության մեջ մեղադրվում են օտար պետությունների գործակալները. «…օտար յեղափոխական գործակալներ Պալքանի կողմերու բնակիչներն ապստամբութեան կ՛գրգռեն և մահմէտականներ կ՛սպաննուին, կանոնաւոր զօրաց չգոյութենէ՝ տաճիկները կը զինուին»[9]: Իրականում այս քաղաքական անցքերի ժամանակ անգլիական դեսպան Հ. Էլիոթը Լոնդոնին տեղյակ չէր պահել քրիստոնյա-

---

[1] Տե՛ս Улунян А., նշվ. աշխ., էջ 92:
[2] «Մասիս», 1876 թ., թիվ 1876, 7(19) սեպտեմբեր, էջ 1:
[3] Տե՛ս «Մասիս», 1876 թ., թիվ 1865, 10 օգոստոս, էջ 1:
[4] «Մասիս», 1876 թ., թիվ 1874, 2(14) սեպտեմբեր, էջ 1:
[5] «Մասիս», 1876 թ., թիվ 1879, 15(27) սեպտեմբեր, էջ 1:
[6] «Մասիս», 1876 թ., թիվ 1883, 23 սեպտեմբեր (5 հոկտեմբեր), էջ 1:
[7] «Արևելյան մամուլ», հունվար, 1877, էջ 34:
[8] Նույն տեղում:
[9] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն, 1876 թ. ցեղասպանության ծրագրի առաջացումը, «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտական զեկույցների ժողովածու, Ե., 2009, էջ 9-17:

ների վրա նախապես պատրաստված հարձակման մասին[1]: Այստեղ, հավանաբար, իր դերն է ունեցել Հ. Էլիոթի և Միդհատ փաշայի բարեկամությունը, քանզի հենց վերջինս էր, որ համարվում էր կոտորածների հեղինակներից մեկը:

Արևմտահայ մամուլը ներկայացնում է նաև Բուլղարիայի ջարդերի հետ կապված անգլիական երկու հակադիր կողմնորոշում ունեցող ուժերի՝ պահպանողական Դիզրայելիի ու լիբերալ Գլաթստոնի տեսակետները: Վերջինիս պարագայում թերթը գրում է, որ նա մեծապես աջակցում է շարժմանը, որ տարածվել է Անգլիայում ու առաջարկում էր Եվրոպայից կամ գոնե Բուլղարիայի սահմաններից արտաքսել կոտորածների կազմակերպիչներին: Դիզրայելիի կարծիքը ներկայացնելով՝ թերթը գրում է. «լորտ Պիքընսֆիլտ (Տիզրայէլի) հասարակաց կարծիքը դիմագրաւելով՝ համբաւաւոր ճառի մը մէջ՝ Անկլիոյ զինուորական զօրութիւնը Ռուսիոյ ակնարկելով՝ կը գովաբանէր և պատերազմի միտում կը յայտնէր ՛ի նպաստ Թուրքիոյ»[2]:

Այսպիսով, արևմտահայ մամուլը մի շարք հոդվածներով անդրադարձավ 1876 թ. ապրիլյան ապստամբությանը: Պարբերականները ներկայացրեցին ինչպես ապստամբության պատճառները, այնպես էլ ապստամբական գործողությունները և մեծ տերությունների դիրքորոշումները: Արևմտահայ թերթերը ապստամբություն սկսելու պատճառ էին դիտարկում նախորդող ձմռան եղանակային պայմանները և թուրքական իշխանությունների անգործությունը դրանք հաղթահարելու հարցում: Այս ապստամբության ժամանակ արևմտահայ թերթերը մեղադրում են տեղական իշխանություններին, որ պարբերական հալածանքների էին ենթարկում հպատակ ազգերին: Այստեղ կարող ենք փաստել, որ արևմտահայ մամուլը, ի տարբերություն նախորդ շրջանի իր հրապարակումներին, դուրս էր գալիս օսմանյան գաղափարական ճնշումներից և ավելի ազատորեն էր արտահայտում իր դիրքորոշումը, թեև չափավորությունը, այնուամենայնիվ, պահպանվում էր: Հարկ է նշել նաև, որ պարբերականները դեռևս զերծ էին մնում իշխանության բարձրագույն ներկայացուցիչներին մեղադրելու մղումներից՝ ապստամբության պատճառ համարելով բաշիբոզուկների և չերքեզների անարդար գործողությունները: Մեծ տերությունների դիրքորոշումները ներկայացնելիս անդրադառնում էին հատկապես անգլիական դիրքորոշմանը: Անգլիայի անհանգստությունը պարբերականները համարում են ներքաղաքական իրադրության արտահայտություն: Ըստ թերթերի, բուլղարական հարցը շահարկվում էր ժողովրդի շրջանում իրենց վստահությունը ամրապնդելու համար: Ապստամբության տարիներին արևմտահայ մամուլը փորձ արեց ապրիլյան իրողությունները ներկայացնել որպես համակարգված գործողությունների շարք, որը նախկինում մերժվում էր:

Айк Мхоян, Отклики болгарского восстания 1876 года в прессе Западной Армении, - Восстание 1876 года, начавшееся в апреле, было одним из решительных событий в истории болгарской народной освободительной борьбы. Восстание распространилось по основным областям страны. В статье мы обратились к этим событиям с точки зрения западноармянской прессы. Западноармянская пресса,

[1] «Արևելյան մամուլ», հունվար, 1877, էջ 34:
[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 1, գ. 10, թ. 1:

особенно в газетах "Масис", "Аревелян мамул", и "Аветабер", представила достаточно широкие отклики по поводу этих событий. В этих газетах отразились отклики как причин восстания, так его протекания и больших недостатков.

Hayk Mkhoyan - The Repercussions of the Bulgarian Rebellion of 1876 in Western Armenian Media, - The rebellion that started in April 1876 and spread throughout the whole country was one of the most decisive events in the history of the national liberatory struggle of Bulgaria. The present article touches upon these events from the perspective of Western Armenian media. The given events have been widely covered by Western Armenian press especially by the newspapers "Masis", "Arevelyan Mamul", and "Avetaber". The above-mentioned newspapers elucidate not only the reasons lying behind the rebellion but also the rebellious operations/acts and the response of the superpowers.

Հայկ Մխոյան - Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) ասպիրանտ, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս: